Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ << Սովորողների քննադատական մտածողության զարգացումը «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների դասերին

Կատարող՝ Վարդուհի Սուքիասյան

Դպրոց՝ Հովի. Թումանյանի անվան համար 32 հիմնական դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1 5
1.1 /Քննադատական մտածողության տեխնոլոգիան 5
1.2 /Քննադատական մտածողության բնութագրիչները 6
1.3 / Քննադատական մտածողության ձևավորման փուլերը 7
1.4 /Քննադատական մտածողության մեթոդների կիրառումը մայրենիի, հայոց լեզվի, գրականության դասերին 8
Գլուխ 2 10
Փորձարարական մաս.....10
Եզրակացություն.....18
Գրականության ցանկ 19
Հավելված 20

Ներածություն

Որպեսզի ուսուցիչը սովորեցնի աշակերտին քննադատաբար մտածել, այդ կարողությանն առաջին հերթին ինքը պիտի տիրապետի: Երջանիկ պատահականությամբ ես ունեցել եմ մանկավարժ ծնողներ, լավագույն ուսուցիչներ, որոնք այնպես են կրթել ու դաստիարակել, որ ես դարձել եմ քննադատաբար մտածող. ազատ ու անկաշկանդ հայտնում եմ իմ սեփական կարծիքը:

Ժամանակակից աշխարհում տեղեկատվության ներհոսքի պայմաններում, երբ համացանցը ողողված է իրարամերժ կարծիքներով, տեղի-անտեղի փոխադարձ մեղադրանքներով, գլխավոր առանցքային հարց է ոչ միայն ինֆորմացիայի տիրապետելը, այլև այն արժևորելը և կյանքում կիրառելը:

Այսօրվա դպրոցի առաքելությունն է քննադատաբար մտածող սերնդի ձևավորումը: Ներկայումս՝ կրտսեր դպրոցական տարիքից սկսած երեխաները տիրապետում են բոլոր տեխնիկական միջոցներին (հեռախոս, համացանց և այլն) և, իհարկե, դրանցում առկա ամբողջ իրարամերժ ինֆորմացիային: Հաճախ առանց խորամուխ լինելու երևույթների պատճառների մեջ, երեխաները կրկնում են ուրիշի տեսակետը: Սա արդեն գերխնդիր է դառնում նրա հետագա կյանքի համար:

Ամեն անգամ ստանձնելով նոր դասարանի <<Հայոց լեզվի>>, << Մայրենիի>> և << Գրականության>> դասավանդման պարտականությունը՝ ձեռնամուխ եմ լինում աշակերտների մտածողության զարգացմանը, այն հաշվով, որ նրանք կարողանան հստակ արտահայտել իրենց սեփական տեսակետը:

Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ:

Հանրակրթական միջին դպրոցում հայոց լեզվի ուսուցման կարևորագույն խնդիրն է նաև երեխային սովորեցնել ընկալել ուրիշի խոսքը, հակիրճ և պարզ արտահայտել սեփական մտքերն ու տեսակետները: Այդ նպատակով անհրաժեշտ է ակտիվացնել ուսումնական գործընթացը, առաջարկել միջոցներ աշակերտների պատճառահետևանքային կապերը վերլուծելու , փաստերն ու երևույթները

գնահատելու կարողությունների ու հմտությունների զարգացման համար՝ ապահովելով աշակերտի աշխարհընկալման ինքնուրույնությունը։

Քննադատաբար մտածող մարդ դաստիարակելուն անմիջապես առնչվում է ազնվության, որպես բնավորության դրական հատկանիշ, ձևավորումը, քանի որ միայն ազնիվ մարդն է ձգտում ճշմարտությունն ասել, իրեն և ուրիշներին չխաբել, եթե անգամ դժվար է և դեմ է իր շահերին։ Ազնվությունը ոչ միայն չստելն է, այլև ձգտումը դեպի ճշմարտությունը, անհանդուրժողականությունը ստի, կեղծիքի նկատմամբ։

«Մեր գանձերն են առողջությունը, կյանքի պարզությունը, ազատությունը, մարմնի և հոգու ամրությունը, առաքինության նկատմամբ սերը. . . հարևանների հետ համերաշխությունը, մտերմությունն ընկերների հետ. . . բարեկեցության մեջ մեղմաբարոյությունը, դժբախտության մեջ անսասանությունը, միշտ **համարձակորեն ճշմարտությունն ասելու խիզախությունը**, կեղծարարության հանդեպ ատելությունը և այլն»։ Ֆ. Ֆենելոնի նշած մարդկային բարոյական արժեքների դաստիարակման համար լայն հնարավորություններ ունեն «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների դասաժամերը։

Աշխատանքի խնդիրներն են.

ա/ բացահայտել սովորողների տրամաբանական մտածողությունը

բ/ նկարագրել աշակերտին ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից դարձնելու պրոցեսը

գ/ բացահայտել գիտելիքը վերլուծելու, սինթեզելու, համադրելու, գնահատելու և արժևորելու կարողությունների ձևավորումը

դ/ իրականացնել ստացված գիտելիքների, հմտությունների կիրառումը կյանքում

ե/ բացահայտել աշակերտների ստեղծագործաբար և քննադատաբար մտածելու կարողությունները։

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, 2 գլխից՝ առաջին գլուխը բաղկացած է 4 ենթագլխից, երկրորդ գլուխը՝ 1 ենթագլխից, եզրակացությունից։

Գլուխ 1

1. 1/Քննադատական մտածողության տեխնոլոգիան

Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող ինֆորմացիայի ճշմարտացիությունը, սեփական հայացքներն ու համոզմունքները: Քննադատական մտածողության համար անհրաժեշտ են գնահատելու, մեկնաբանություն,վերլուծություն, եզրակացություն անելու կարողություններ և հմտություններ, ինչպես նաև դիտողականություն: Քննադատական մտածողությունը չպետք է նույնացնել քննադատության հետ, որի արդյունքում քննադատական մտածողությունը կարող ենք դիտել որպես բացասական երևույթ: Քննադատական մտածողության դրսևորումներ են պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները:

Քննադատական մտածողությունը նոր մանկավարժական մոտեցում է: Հին ժամանակներում ուսուցիչը մատուցում էր պատրաստի գիտելիք, իսկ այժմ նա հաղորդողից վերածվել է սովորողի, ուսումնական աշխատանքը կազմակերպողի: Քննադատական մտածողության շնորհիվ աշակերտը ձևավորվում է որպես հասարակության գործող անդամ, ով ունի հաղորդակցվելու, համագործակցելու, ուրիշի կարծիքը լսելու և գնահատելու, ինքնուրույն դիրքորոշում մշակելու, իր որոշումների համար պատասխանատվություն կրելու կարողություններ:

Այսպիսով, եկանք այն եզրահանգման, որ քննադատական մտածողության արմատները գցվել են դեռ վաղ անցյալում, այն զարգացում է ապրել և ստացել իր այսօրվա կերպարանքը: Քննադատական մտածողությունը բարդ գործընթաց է, որը պահանջում է մի շարք կարողություններ ,հմտություններ, և որի շնորհիվ մարդը ձեռք է բերում ինքնուրույնություն, զարգանում է տրամաբանությունը, ձևավորվում է անհատի տարբերվող աշխարհայացքը:

1.2 /Քննադատական մտածողության բնութագրիչները

1. Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Սա նշանակում է, որ այն հնարավորություն է տալիս յուրաքանչյուր սովորողի ձևավորել իր սեփական գաղափարները: Դասարանում պիտի ստեղծել ազատ մթնոլորտ, որպեսզի երեխաները կարողանան մտածել ու ինքնուրույն գտնել հարցերի լուծումները:
2. Գիտելիքը քննադատական մտածողության խթանն է: Քննադատական մտածողությունն օգնում է աշակերտներին ընկալելու ամենաբարդ հասկացություններ և մտապահելու շատ ու շատ տեղեկություններ:
3. Քննադատական մտածողությունն սկսվում է հարցադրումներից: Կարևոր են տարամետ հարցերը, որոնք նպաստում են քննարկումների ծավալմանը և դրանով իսկ նպաստում քննադատական մտածողության հմտությունների զարգացմանը:
4. Միջին դպրոցի սովորողները շատ հետաքրքրասեր են, նրանք ուզում են իմանալ ամեն ինչ: Ուսուցչի խնդիրը աշակերտներին օգնելն է, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն ձևակերպումեր անել, որից հետո միանգամից հարցի պատասխանը չտալ, այլ երեխան ինքը գա դրան: Այսինքն նյութն այնքան պիտի մանրացնել, որ սովորողը,հենվելով իր ունեցած գիտելիքների վրա, կարողանա կատարել եզրահանգումներ ու գտնել լուծումը:
5. Քննադատական մտածողությունն ունի հասարակական ուղղվածություն:

1. 3/ Քննադատական մտածողության ձևավորման փուլերը

Ուսուցիչը, որպեսզի կարողանա զարգացնել երեխաների մոտ քննադատական մտածողություն, նախ պիտի՝

- խմբում աշխատելու կարողություն զարգացնել
- զարգացնել համագործակցելու հմտություններ
- զարգացնել անձնական նախաձեռնություն ցուցաբերելու ունակություններ
- զարգացնել միջառարկայական կապերի ձևավորման կարողություններ
- ձևավորել գիտելիքը ստեղծագործաբար իմաստավորելու, ըստ կարևորության ինֆորմացիան համակարգելու հմտություններ

Սովորողը պետք է ունենա նաև ազնվություն, այսինքն չպիտի հուզականորեն կողմնորոշվի որևէ իրավիճակի նկատմամբ: Հակառակ դեպքում նա զբաղվում է ինքնախաբեությամբ: Իհարկե սա բարդ աշխատանք է, քանի որ մենք գործ ունենք միջին դպրոցի աշակերտի հետ /նրանք չեն կարող երևույթին տալ օբյեկտիվ գնահատական, կարճ ասած նա ամեն իրավիճակ սրտին մոտ է ընդունում/:

Աշակերտի քննադատական մտքի ձևավորումը կախված է նրա ընդունակություններից, հետաքրքրություններից, կարևոր են նաև ուսումնական նյութի բովանդակությունը, կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները:

Եկանք այն եզրակացության ,որ յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է սովորել սովորեցնելը: Սրա հիմքերը դրվում են կրտսեր դպրոցական տարիքում և իր զարգացումն ապրում միջին դպրոցում:

Ընթերցանությունից հետո ուսուցիչը պիտի օգնի աշակերտին խորհել կարդացածի մասին:

Խորհելիս մենք դիմում ենք հետևյալ բայերի օգնությանը՝
տարբերակել, պարզաբանել, դասակարգել, միավորել, ստեղծել, ենթադրել, գնահատել, առաջարկել, կանխատեսել:

Առաջին փուլում ցուցաբերում ենք գիտելիքահեն մոտեցում, երկրորդում կատարվում է համեմատում, վերլուծում, իսկ վերջին փուլում կայացվում են որոշումներ:

1.4 /Քննադատական մտածողության մեթոդների կիրառումը <<Մայրենի>>, << Հայոց լեզու>>, <<Գրականություն>> առարկաների դասերին

Քննադատական մտածողությունը զարգացման երեք փուլերից բաղկացած համակարգ է, այն կներկայացնեm ԽԻԿ հապավումով:

Խթանման փուլի նպատակն է խթանել երեխաների հետաքրքրությունը, առաջացնել ցանկություն նորը ուսումնասիրելու: Կարող ենք կիրառել «Մտագրոհ», «Բանալի եզրույթներ» մեթոդները: Այս փուլում ուսուցիչը հանդես է գալիս ուղղորդողի դերում: Այս փուլում սովորողները լրացնում են իրենց իմացածը մյուսների գիտելիքներով, գիտելիքը դառնում է հաստատուն: Այս փուլի նպատակն է նաև աշակերտին ակտիվացնել: Ակտիվացնելով աշակերտներին՝ նրանց մոտ առաջանում է հետաքրքրություն ուսումնասիրվող նյութի նկատմամբ, որից էլ կախված է այս փուլի արդյունավետությունը:

Իմաստի ընկալման փուլ- Ուսուցչի ազդեցությունը նվազագույնն է սովորողի նկատմամբ: Սովորողները շփման մեջ են մտնում նոր ինֆորմացիայի, մտքերի հետ: Կարելի է կիրառել «Փոխգործուն գրառումներ» մեթոդը տեքստի ընթերցանության ժամանակ: Եթե առաջնորդվենք միայն ավանդական ուսուցման մեթոդներով, աշակերտը քիչ բան կհիշի անցածից: Այս փուլում սովորողները նորը կապում են հնի հետ և ստեղծում նոր իմաստավորում:

Կշռադատման փուլ- գիտելիքների ամրապնդման փուլն է: Այս փուլի նպատակն է՝

- կազմավորել նոր պատկերացումներ
- ձևավորել անձնական իմաստավորում (սովորողը յուրացրածն արտահայտում է սեփական բառերով)
- մտքերի փոխանակման հարթակ ստեղծել:

Կարելի է կիրառել հետևյալ մեթոդները՝

զույգերով ընթերցում

հնգյակների մեթոդ

5 բոպեանոց շարադրանք

Վեննի դիագրամ

Եզրակացություն- ԽԻԿ համակարգը հնարավորություն է տալիս՝

- ակտիվացնել երեխաների մտածողությունը
- հետաքրքիր քննարկումներ ծավալել
- բարձրացնել ուսման շարժառիթները
- խթանել կշռադատված մտածողությունը
- նպաստել երեխաների ինքնաարտահայտմանը
- ապահովել տեղեկատվության հայտնման մշակումը
- նպաստել քննադատական մտածողության ձևավորմանը:

Աշակերտները նոր գիտելիքները նոր բառապաշարի միջոցով ըմբռնելու, յուրացնելու, իմաստավորելու և կշռադատելու շնորհիվ է, որ սովորում են սովորել և այն վերածել ամբողջ կյանքում շարունակվող գործընթացի:

Գլուխ 2

Փորձարարական մաս

Փորձարարական մասում ներկայացնում եմ դասապլան, որտեղ արտացոլել եմ իմ փորձից մեկ օրինակ: Կներկայացնեմ քննադատական մտածողության զարգացմանը միտված դաս:

Դպրոցն իր պատմության ողջ ընթացքում եղել և մնում է հասարակության կողմից գնահատվող արժեքներից բարձրագույնը:

Սովորողների ուսուցման և դաստիարակության պրոցեսում ամենակարևորը դասի 45 րոպեն է և ուսուցչի կենդանի խոսքը: Ահա թե ինչու այսօրվա ուսուցիչը պետք է զինված լինի ժամանակակից մեթոդների իմացությամբ, իր կազմակերպչական, հաղորդակցական, գիտելիքների համակարգման ու ընդհանրացման կարողություններով, աշակերտների ճանաչողական ու հոգևոր զարգացումը խթանելու կարողությամբ:

Անընդհատ պետք է կատարելագործել հայոց լեզվի և գրականության ուսուցումը: Այս տեսակետից չափազանց կարևորում եմ տարբեր մեթոդներով դասերի վարման պլանների նպատակային կազմումը:

7-րդ դասարանում Պարույր Սևակի կենսագրական տեղեկությունների և ստեղծագործության ընդհանուր պատկերի ուսուցման ընթացքում կարևորել եմ նաև սովորողների քննադատական մտածողության զարգացումը և այն դարձրել եմ դասի նպատակ:

Պարույր Սևակ (3 ժամ)

Դաս 1-ին

Թեման՝ Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը

Տևողությունը՝ 45 րոպե

Դասի նպատակները՝

Կիմանա՝

. Պ. Սևակի կենսագրության հիմնական դրվագները։

. Ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, ժողովածուների և շարքերի վերնագրերը։

Վերջնարդյունք՝

. Ներկայացնել Սևակի կենսագրության հիմնական դրվագները։

. Սովորողների քննադատական մտածողության զարգացում Սևակի, որպես մարդ - անհատի, քաղաքացու, կյանքի և ստեղծագործությունների օրինակներով։

ՈՒսումնական մեթոդները՝

«Բանալի բառեր», «Վեբ-որոնում», <<Ինդուկտիվ զրույց>>, «Հինգ րոպեանոց շարադրանք»

ՈՒսումնական նյութերը՝

. Դասագիրք, Սևակի ստեղծագործությունների ցանկը (պաստառի վրա), Սևակի գրքերը, իմ հեղինակած Պ Սևակի դիմանկարը՝ պատրաստված վարդի թերթերից, «Պ. Սևակ» հեռուստաֆիլմը, ընտանեկան լուսանկարները։

Դասի ընթացքը՝

Հարցերով ստուգել հին դասը, ամփոփել Սիլվա Կապուտիկյանի կյանքի և ստեղծագործությունների վերաբերյալ ստացած գիտելիքները։

Նոր նյութի հաղորդում

Խթանում

Ինդուկտիվ զրույցի մեթոդով վարել հետևյալ զրույցը՝

Այդ պատանին բացառիկ երեխա էր, մոլի ընթերցասեր։ Եթե գիրք էր գտնում, նրան մայրը երկար պիտի փնտրեր, որ գտներ։ Նրան գտնում էր իրենց բակի ծառերից մեկի կատարին նստած ընթերցելիս։ Հետո նա պիտի Խ. Աբովյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի նման դառնար գրող, ովքեր կոչվում են առաջատար, նորարար, նոր ճանապարհ բացող, հիմնադիր։

ՈՒ՞մ մասին է խոսքը։

Մինչև կմտածեն, գրատախտակին գրել թեմային առնչվող բառեր ու գաղափարներ՝ (զանգակատուն, եղեռն, Կոմիտաս, ավտովթար և այլն)։

Հնարավորություն տալ բոլոր աշակերտներին արտահայտելու իրենց տեսակետը։ Ընդհանուր եզրակացության հանգելուց հետո ներկայացնել Պ. Սևակի կենսագրության կարևոր դրվագներ, կարդալ հուշեր Պ. Սևակի մասին։

Իմաստի ընկալում։

Այս փուլում հանձնարարել ինքնուրույն կարդալ դասագրքի համապատասխան նյութը և կարդալիս կատարել նշումներ տետրում կամ մատիտով գրքի վրա այն տեղեկությունների վերաբերյալ, որոնք պետք է խորությամբ ուսումնասիրել։

Պ. Սևակին համակողմանի ներկայացնելու համար՝

. Ցուցադրել Սևակի ստեղծագործությունների մասին պաստառը։

. Ներկայացնել տարբեր տարիների հրատարակված գրքերը։

. Ցուցադրել ընտանեկան լուսանկարներ և ներկայացնել Սևակի ընտանիքը, նրա գերդաստանի ծագումնաբանությունը։

. Շոնդալից մուտքը հայ գրականություն, Չարենցին հոգևոր հայր ընտրելը՝ զուգահեռներ անցկացնելով Չարենց և Սևակ բանաստեղծների մեջ, անվան հետ կապված պատմությունը։

. Խոսել «Անլռելի զանգակատուն» պոեմի մասին, գրողի պետական մրցանակի, պարգևատրումների մասին։

. Խոսել Սևակի ողբերգական վախճանի մասին։

Սովորողներին ծանոթացնել նաև այն հանգամանքին, որ Սևակն ապրել է գաղափարական բռնությունների մեջ և ընդդիմության մեջ էր իշխող վարչակարգի պաշտոնական գաղափարախոսության դեմ։ 1969 թվին պետք է լույս տեսներ Սևակի <<Եղիցի լույս>> ժողովածուն, որը կալանքի ենթարկվեց։ Արդար ու արդարադատ

բանաստեղծի համարձակ խոսքը բախվեց խորհրդային պաշտոնական գաղափարախոսության պատին։ Ժողովածուն գաղափարական զտումների ենթարկվելուց հետո լույս տեսավ միայն գրողի մահից հետո։ Երեխաներին առաջարկում եմ դատողություններ անել՝

ա/ Ճի՞շտ էր արդյոք Սևակը, երբ ընդդիմանում էր իշխող վարչակազմին։

բ/ Պատրա՞ստ ես արդյոք ասել ճշմարտությունը, եթե դրա համար հնարավոր է քեզ պատժեն։

Կշռադատում։

Առաջադրել հարց՝ ինչ տեղեկություններ կամ հուշեր գիտեք Պ. Սևակի մասին, որոնց մասին չհիշատակվեց նոր նյութի հաղորդման ընթաց քում։

Թեմայի յուրացումից հետո հանձնարարել «Հինգ րոպեանոց շարադրանք»՝ « Ի՞նչ սովորեցինք Սևակի մասին» թեմայով։

Հանձնարարել տանը համացանցում գտնել և դիտել հատված «Պարույր Սևակ» հեռուստատեսային վավերագրական ֆիլմից։

Դասի վերջում երեխաներին հայտնել Սևակի ծննդավայր՝ Զանգակատուն, էքսկուրսիայի մասին։

Կատարել անդրադարձ։

7-9-րդ դասարաններում սովորողների քննադատական մտածողության զարգացմանը միտված դասեր եմ պլանավորում նաև ներքոհիշյալ դասերի անցկացման ժամանակ՝

9-րդ դասարան – Մ. Խորենացու <<Ողբը>>, <<Սասունցի Դավիթ>> էպոսը

8-րդ դասարան – Մուրացան << Հասարակաց որդեգիրը>>, Շիրվանզադե <<Արտիստը>>, Նար-Դոս << Ես և նա>>, Հեմինգուեյ <<Ծերունին և ծովը>>

7-րդ դասարան – Բակունց << Սպիտակ ձին>> և այլն։

Քննարկվող խնդրի լուծման համար շատ լայն հնարավորություն է ընձեռում Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքը։ Սովորողների վրա առանձնահատուկ ազդեցություն է թողնում Լևոնի կերպարը։ Այդ պատանին երևում է սիրո և արվեստի խանդավառ նվիրումի մեջ և երբ կորցնում է և՛ սերը, և՛ արվեստի կատարելագործման հեռանկարը, իրականության բիրտ ուժը տապալում է նրան։ Վաստակած միջոցների կորուստը, անհեռանկար սիրո մարող հույսը նրան դուրս են մղում այն մեծ աշխարհից։ ԵՎ նա կանգնում է ավարտվող կյանքի ողբերգության առջև, որն իրականություն է դառնում նրա ինքնասպանությամբ։

Պատմվածքը բազում հույզեր ու զգացմունքներ է առաջացնում երեխաների մեջ։ Լևոնը ազնիվ էր ու արժանապատիվ, տաղանդավոր էր ու տաղանդ գնահատող։ Ի՞նչն էր պակասում Լևոնին կյանքում իր տեղը գտնելու համար։ Իսկ ինչու՞ են ներկայումս երիտասարդներից ոմանք դիմում ինքնասպանության։ Սովորողներին հնարավորություն եմ տալիս ազատ մտածել, քննադատորեն մոտենալ հարցին և հայտնել բացառապես սեփական կարծիքը։

Տարբեր մեթոդների և հնարների կիրառմամբ հասնում եմ նրան, որ սովորողը համեմատում և ստեղծում է կապեր սեփական փորձի, իրականության և ստեղծագործության մեջ նկարագրված իրադարձությունների միջև, համեմատում է իրենց և ստեղծագործության մեջ արտահայտված հույզերն ու ապրումները, ձևակերպում, ներկայացնում է, իսկ հետո հիմնավորում, պաշտպանում սեփական կարծիքն ու վերաբերմունքը գրական ստեղծագործություններում արծարծված տարբեր երևույթների, իրադարձությունների նկամամբ։

Սա հենց ուսուցման այն նպատակն է, ինչ նախատեսված է «Գրականություն» առարկայի թեմատիկ պլանավորման մեջ։

Քննադատական մտածողության զարգացման նպատակով «Գրականություն» առարկայի դասերին օգտագործում եմ հայ դասականների հայրենասիրության թեմաներով գրված ստեղծագործությունները։ Դրանցում արտահայտված գաղափարները համեմատում եմ մեր երկրի ներկա վիճակի հետ։ Հնարավորություն եմ տալիս սովորողներին արահայտելու իրենց կարծիքը հայրենիքի համար զոհվածների, մամուլում և պաշտոնական հաղորդագրություններում

մեջբերվող դավաճանների վերաբերյալ: Այդ թեմաները խորը վերլուծության ենք ենթարկում Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմն անցնելիս: Երեխաներից պահանջում եմ բերել չարի և բարու օրինակներ մեր առօրյա կյանքից: Առաջարկում եմ պատասխանել հետևյալ հարցերին՝

Ի՞նչ կանեիր, եթե քո սիրած աղջիկը դավաճաներ հայրենիքին և քեզ:

Ի՞նչ պատիժ կառաջարկես հայրենիքի դավաճանին:

Մի քանի նախադասությամբ գրիր քեզ համար շատ թանկ մարդու մասին այն, ինչ կասեիր նրա աչքերի մեջ նայելով:

Երեխայի մեջ կարևոր է նաև քննադատական մտածողություն ձևավորել

սեփական խոսքի նկատմամբ:

Հեռուստասերիալներում առկա բառակազմական, քերականական, լեզվառճական սխալները ժամանակի ընթացքում թափանցել են երեխաների խոսք, նրանք ընտելացել են դրանց:

Հինգերորդ դասարանում երեխաները ոգևորությամբ արտասանում են Ս. Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» և Ն. Զարյանի «Հայոց լեզու» բանաստեղծությունները:

Կազմակերպում եմ բանավեճ, որը քննադատական մտածողության զարգացման համար ժամանակակից դիդակտիկայի մեջ կիրառվող մեթոդների ցանկում կարևոր տեղ ունի:

Դիսկուսիա՝ լատիներեն՝ discuccid- հետազոտություն, քննարկում: ՈՒսումնական բանավեճը մտքերի, դրույթների, կարծիքների նպատակամետ և որոշակիորեն կարգավորված փոխանակություն է՝ հանուն ճշմարտության որոնման, ընդ որում՝ բոլոր սովորողներն այդ փոխանակության կազմակերպման մասնակիցներն են:

Բանավեճն ուղղված է սովորողների՝ նոր գիտելիքների ձեռք բերմանը, սեփական կարծիքի ամրապնդմանը , այն պաշտպանելու կարողության զարգացմանը և, ամենակարևորը, սովորողների քննադատական մտածողության զարգացմանը:

Դասարանը բաժանում եմ երկու խմբի՝ հեռուստատեսային սերիալներ նայողների և չնայողների։ Հակիրճ զրույցից հետո երեխաները արտահայտում են իրենց կարծիքները սերիալներում հնչած բառապաշարի, լեզվական սխալների մասին։ Դրանով լուծում եմ վերը նշված երկու խնդիր։

Այս երևույթի պայքարի մեջ ձգտում եմ վեր հանել քերականական համակարգի ճշմարտությունը և զարգացնել երեխայի քննադատաբար մտածելու ունակությունը։

Չափազանց կարևորում եմ հայոց լեզվի ուսուցման պրոցեսում դաստիարակչական խնդիրների լուծումը։ Հայոց լեզվի ուսումնասիրության թեմաները հաճախակի ընդմիջվում են տարաբնույթ այլ աշխատանքներով, որոնց նպատակն է բազմազանության և հետաքրքրականության, միաժամանակ դաստիարակչական շատ կարևոր հարցի՝ քննադատական մտածողության զարգացման ապահովումը։

Այսպես՝ թելադրում եմ Գ. Էմինի ստեղծագործության ներքոհիշյալ հատվածը / հավելված 2/ և տալիս եմ առաջադրանք, օրինակ՝ բոլո՞րն են արդյոք պահում ու պահպանում մեր հնագույն ճարտարապետական կոթողները։ Բերել օրինակներ։ Քննադատական խոսք ուղղել մեղավորներին ։

Հաջորդ դասին ընթերցել եմ տալիս երեխաների արահայտած սեփական մտքերը ազգապահպան այս կարևոր հարցի վերաբերյալ։

Նմանատիպ թելադրություն եմ տալիս նաև ըստ Շիրվանզադեի ներքոհիշյալ տեքստը / հավելված 3 / ՝ միաժամանակ դնելով երկու նպատակ.

1. Տրված տեքստից ընտրել 1-2 նախադասություն և դրանք ենթարկել շարահյուսական վերլուծության։

2. Հայերի անհատական քաջության և ընկերային ոգու բացակայության թեման արդիականացնել, արտահայտել սեփական կարծիք, անկաշկանդ քննադատաբար արտահայտվել կոնկրետ դասարանի աշակերտների և ներկայումս տեղեկատվական դաշտում տիրող իրավիճակի օրինակներով։

Նյութն այնքան արդիական է, որ մեծ հետաքրքրություն է ներկայացնում երեխաների համար: Նրանք բերում են բազմաթիվ օրինակներ առօրյա կյանքից, համացանցից, կինոֆիլմերից, կարդացած գրքերից:

9-րդ դասարանում գործնական գրություններից դիմումի ուսուցման ժամանակ առաջադրել եմ սովորողներին գրել դիմում՝ հասցեագրված Երևանի քաղաքապետին՝ ներկայացնել մտահոգությունները Երևան քաղաքի խնդիրների վերաբերյալ և հանդես գալ առաջարկություններով: Ներկայացվում է աշակերտներից մեկի դիմումը /հավելված 4/:

Եզրակացություն

Ուսումնասիրման ժամանակ եկանք այն եզրակացության, որ քննադատական մտածողության համար անհրաժեշտ են գնահատելու, մեկնաբանություն, վերլուծություն, հետևություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ , հմտություններ ու դիտողականություն:

Չնայած այն հանգամանքին, որ ես կարևորում եմ քննադատական մտածողությունն իմ և աշակերտներիս կյանքում, պետք է խոստովանեմ, որ չունեմ համապատասխան մասնագիտական սեմինար-դասընթացների մասնակցության փորձ և ըստ այդմ ցանկալի է նման դասընթացների կազմակերումը հայոց լեզվի և գրականության ուսուցիչների համար: Վերհանելով քննադատական մտածողության վրա ազդեցություն ունեցող դասավանդման տեխնիկաները՝ կարող ենք բարեփոխել ուսումնական պլանները և առարկայական ծրագրերն այնպես, որ կրթությունը ծառայի մեր հիմնական նպատակներից մեկին՝ կրթել քննադատաբար մտածող անձնավորության:

Աշակերտի քննադատական մտածողությունը զարգացնելու լավագույն մեթոդը կլինի այն, որ մշակվեն ծրագրեր՝ հիմքում ունենալով քննադատական մտածողություն ձևավորելու տեսլականը: Այսինքն, գիտելիքի ձեռքբերմանը զուգահեռ աշակերտները պիտի կարողանան մտածել, տրամաբանել և հիմնավորել: Այս առումով անգնահատելի է ուսուցչի դերը: Մայրենիի, հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում կարևորվում է այն հանգամանքը, որ միջին դպրոցի սովորողը մտածի ուսումնասիրվող ստեղծագործությունների բովանդակության ու նշանակության մասին, իսկ սրան ուսուցիչը կարող է հասնել բաց հարցերի կիրառումով: Դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի, առարկայի նկատմամբ և կարող են ունենալ մոտիվացնող նշանակություն: Բաց հարցերը դրդում են աշակերտին վերլուծել նյութը,նրա մոտ ձևավորում են փոխանցելի հմտություններ, որոնց շնորհիվ նրանք ցանկացած իրավիճակում կարողանում են հիմնավորված եզրակացություններ անել, լինել շրջահայաց և կայացնել որոշումներ:

Գրականության ցանկ

1. Ն. Տողանյան, Թ. Թովմասյան, Լ. Գրիգորյան << Հայոց լեզու և գրականություն առարկաների թեմատիկ պլանավորում>>
2. Թ. Թովմասյան, Ս. Աբազյան << Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, 7-րդ դասարանի գրականություն>>
3. Դ. Գասպարյան, << Գրականություն, ուսուցչի ձեռնարկ 7-9-րդ դասարան >>
4. Ջ. Գյուլնազարյան, << Խոսքի զարգացում>>
5. Ա. Ասլանյան << Հայոց լեզուն 9-րդ դասարանում>>
6. Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան, << Հայոց լեզու, գործնական աշխատանքների ձեռնարկ>>

Հավելված 1

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. << Անմահները հրամայում են >> I – գիրք 1948թ.

2. << Անհաշտմտերմություն >> II – գիրք / պոեմ / 1953թ.

3. << Սիրո ճանապարհ >> III – գիրք 1954 թ.

4. << Նորից քեզ հետ >> IV – գիրք 1957 թ.

5. << Անլռելի զանգակատուն >> V – գիրք 1959թ.

6. << Մարդը ափիմեջ >> VI – գիրք 1963 թ.

7. << Եղիցիլույս >> VII – գիրք 1969 թ.

Հավելված 2

Շատ և ամեն տեսակ քար կա Հայաստանում, բայց անգրագետ քար համարյա չես գտնի։

Զգույշ քայլիր այս հողի վրա և զգույշ վարվիր ամեն մի քարի հետ, որն արտաքինից կոպիտ է, չեչոտ, չոր մամուռով ու քարաքոսով պատած։ Զգույշ, որովհետև եթե եղունգով փոքր – ինչ մամուռը քերես, նրանցից ամեն մեկի վրա նախնադարյան մարդու գծանկարներ կտեսնենս, նշանագրեր, արամեական, խալդ- ուրարտական սեպագիր արձանագրություններ, զարդ ու քանդակ, իսկ չորրորդ դարի վերջից սկսած՝ նաև այն երկաթե պայտերի նմանվող ամուր ու դիմացկուն տառերը, որոնք անբաժան են այս քարերից ավելի քան հազար վեց հարյուր տարի։ Ո՛չ միայն գրագետ՝ ստորագրված են այս քարերը, մե՛ր քարերն են։

Նրանցից ամեն մեկի վրա մեր ինքնության դրոշմը կա, ճիշտ այնպես, ինչպես այս հողի վրա մեր ինքնության քարե ծանր կնիքը՝ մեր ճարտարապետական կոթողների տեսքով։

Հայոց հողի ամեն մի էջի վրա, ամեն դաշտում, ձորում, լեռան ծերպին կամ գագաթին կոթող կա՝ մի քարե վանք, մի խաչքար, մի կամուրջ- քարե մի կնիք առ այն, որ այս հողը մերն է, մեր սեփականը։

Հավելված 3

Ռաֆֆին շատ էր սիրում խոսել հայերի անհատական քաջության մասին։ Նա ասում էր, որ եթե այդ անհատական քաջությունը ընկերական լիներ, հայերը կարող էին աշխարհի երեսին մի զորեղ ազգ լինել։

— Ամեն մի հայ, առանձին վերցրած առյուծ է, ինչպես և խելքով ու դատողությամբ՝ հսկա։ Բայց ընկերական ոգու բացակայությունը, խմբովին գործելիս, ջլատում է նրա ուժերը։ Ձգեցեք մենակ հային վտանգների փոթորկի մեջ, սա արժանավորապես կպաշտպանի իր գլուխը։ Բայց խմբեցեք մի քանի հայեր միասին, և նրանք պաշտպանվելու կամ հարձակվելու փոխարեն կսկսեն խորհել, մտածել, հակաճառել և, վերջապես թշնամուն թողած՝ միմյանց միսը ուտել։ Այո՛, անհատականությունը հայի գլխավոր թշնամին է, և նա տարածված է մեր բոլոր դասակարգերի ու բոլոր գործերի մեջ։ Արդյոք մեր ազգի մտավոր առաջնորդները կկարողանա՞ն մի փոքր հիմարացնել անհատ հային և խելոքացնել ընկերային հային։ Եթե այդ եղավ, մենք կարող ենք ապագա ունենալ, եթե ոչ՝ մենք կորած ենք, կամ կապրենք այնպիսի ամոթալի կյանքով, ինչպես ապրել ենք մինչև այսօր։

Հավելված 4

Երևանի քաղաքապետին

Թումանյանի անվան դպրոցի

Աշակերտուհու կողմից

Դիմում

Երեխայի իրավունքները կարգավորվում են <<Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքով, որի նպատակն է երեխայի իրավունքների իրականացումը, երեխայի օրինական շահերի պաշտպանությունը, ինչպես նաև երեխայի բարեկեցությունը, նրա անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացմանը միտված բարենպաստ պայմանների ստեղծման համար անհրաժեշտ կազմակերպական հիմքերի ամրագրումը:

Եվ նվազագույն իմ կողմից կատարված ուսումնական գործունեությունից՝ ես ուզում եմ կանգ առնել մի քանի կարևորագույն ինդիքների վրա, որոնց լուծումը անմիջականորեն Երևանի քաղաքապետարանի իրավասության շրջանակում է:

Վերջերս ուժեղ երկրաշարժը ցնցեց մեր քաղաքամայրը: Մեր քաղաքացիները, այդ թվում նաև երեխաները, սարսափած դուրս թափվեցին տներից: Պարոն քաղաքապե՛տ, Ձեր խոսքերով ասած, բարեբախտաբար զոհեր և ավերածություններ չունեցանք: Հաջվի առնելով Հայաստանում սեյսմիկ ակտիվությունը և մեծ քանակության ամբ վթարային շենքերի առկայությունը՝ իմ կարծիքով շատերեխաներ հայտնվել են կյանքի համար վտանգավոր և անպաշտպան իրավիճակում:

Ո՞րն էր քաղաքապետարանի բուն գործառույթը կոնկրետայս երկրաշարժի ժամանակ, եթե նկատի ունենանք, որ կապը նույնպես ընդհատվել էր, բնակիչները մնացել էին բակերում երեխաների հետևյալ գիտեին ինչ անել: Երբ մուտքը վրահասավ, ստիպված երեխաներին տարան տուն: Իմ կարծիքով բնակչությունը չպետք է մնար առանց իրազեկման, առանց տարերային աղետի վտանգավորության ասիճանի մասին հստակ ինֆորմացիայի, առանց հոգեբանական աջակցության՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ երեխաները ահավոր վախեցած էին և չէին ուզում մնալ շենքում: Ես առաջարկում եմ համատեղ ծրագրեր մշակել քաղաքապետարանի, Արտակարգ իրավիճակների նախարարության, Առողջապահության նախարարության հետհամատեղ՝ հատկապես երեխաներին ցույց տրվող հոգեբանական հրատապօգնության վերաբերյալ: Առաջարկում եմ նաև հստակ ինֆորմացիա տալ բնակիչներին իրենց շենքերի վթարային նության ասիճանի վերաբերյալ, որպեսզի բնակիչները հստակ պատկերացնեն իրենց երեխաների կյանքի ապահովության ասիճանը:

Ըստհոդված 29-ի՝ զինված հակամարտության ժամանակ պետությունն ու նրահամապատասխան մարմինները ապահովում են երեխայի հատուկ պաշտպանությունը:

Ես իմ օրինակով կասեմ՝ ես ոչ մի ինֆորմացիաչունեմ, թե զինված հակամարտության ժամանակ, եթե հնչի սիրենայանը, որն է իմ անելիքը, եթե հիարկե դպրոցում չեմ, դեպի ուր պետք է վազեմ, որտեղ պատսպարվեմ: Գուցե սաԱրտակարգ իրավիճակների նախարարության գործառույթն է, սակայն ապատանների պարբատման, կանավորման, բնակչությանը անվտանգ տարածքով ապահովելու ինդիրը կարծում եմ Երևանի քաղաքապետարանի պետության կողմից պատվիրակված գործառույթն է: Այս հարցը չպահանջում պատասխան է ներկայումս տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրավիճակի, մեր թշնամի պետության կողմից մեր սահմաններում սադրիչ գործողություններ մշտապես իրականացնելու պարագայում: Առաջարկում եմ, պարոն քաղաքապետ, Ձեր հստակ հանձնարարականը թաղապետերին, բնակելի շենքերի ներքնահարկերի ուսումնասիրությունն կատարելու և այս հարցը հնարավորինս կարգավորելու համար:

Ուզում եմ խոսել նաև ցանկացած բռնության ենթարկված երեխայի պաշտպանության միտված գործունեության և նրա համապատասխան մարմինների՝ կոնկրետապես՝ քաղաքապետարանի կողմից իրականացվող գործառույթների մասին / հոդված 9/:

Վերջերս մեզ՝ պատգամավորներիս, ցնցեց Երևանի գեղամարգում 17-ամյա աղջիկայի ինքնասպանության փաստը: Ի՞նչ վիճակ է մեր քաղաքի շատ գեղամարգում մեր՝ հայաստանցիներս, որտեղով շատ երեխաներ ստիպված են վազքով հասել դրանք:

Ի՞նչ պետք է անի քաղաքապետարանը: Իմ կարծիքով նորմալ վիճակի բերելուց բացի՝ պետք է տեսանկարահանող սարքեր տեղադրել, շրջայցեր կազմակերպել գիշերային ժամերին, ինչու չէ նաև մշտական հերթապահություն ոստիկանության բաժանմունքների կողմից: Գեղամարգում միայն սպասելով՝ երեխաները հասում են վողոցը արգելված հագուստով և հաճախակի վրաերթի ենթարկվում:

Անձարգո քաղաքապետ, առաջարկում եմ նաև ուժեղացնել կապը քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության և համայնքային ենթակայության դպրոցների միջև, հաճախակի կազմակերպել հանդիպումներ, կլոր սեղաններ աշակերտների մասնակցությամբ, լսել երեխաներին, որպեսզի ավելի հստակ պատկերացում ունենաք երեխաների իրավունքների խախտման հետևանքով դեպքերի մասին:

Շնորհակալություն:

Ամիս, ամսաթիվ Ղիմող՝ /անուն, ազգանուն /

Իմ ձեռքի աշխատանքը

Սևակի դիմանկարը վարդի թերթերով